«Հայաստանյաց Առաքելական Եկեղեցի»

Գրականության և մոմի վաճառակետի կառուցման նախագծի

/ք. Երևան. Կենտրոն վարչական շրջան, Թումանյան 71, Սբ. Զորավոր Աստվածածին եկեղեցի/

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկող՝ «Հայաստանյաց Առաքելական Եկեղեցի»

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 6

2.1 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը 6

2.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացը 6

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ 7

4 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 9

4.1. Նախագծային և տեխնոլոգիական լուծումները 11

4.2. Շինարարական աշխատանքների կազմակերպում 13

4.3. Հողային աշխատանքներ 14

4.4. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում 16

5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 17

5.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները 17

5.2. Ռելիեֆը 17

5.3. Տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները 17

5.4. Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները 18

5.5. Սեյսմիկ բնութագրերը 18

5.6. Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը 19

5.7. Օդային ավազան 22

5.8. Ջրային ռեսուրսներ 24

5.9. Հողային ռեսուրսներ և հողօգտագործումը 24

5.10. Կենսաբազմազանություն 25

5.11. Պատմամշակութային արժեքներ 27

5.12. Սոցիալ տնտեսական պայմանները 27

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 30

6.1 Շինարարական աշխատանքներ 30

6.2 Օդային ավազանի աղտոտվածություն և մեղմացման միջոցառումները 30

6.3 Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում 35

6.4 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն 36

Ջրահեռացում 37

6.5 Թափոնների առաջացում և կառավարում 38

6.6 Սոցիալական ազդեցությունները և մեղմացումը 38

6.7 Երթևեկության վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումները 39

6.8 Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները 39

6.9 Աշխատանքի անվտանգության և հակահրդեհային միջոցառումներ 40

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 41

7.1. Մթնոլորտային օդ 41

7.2 Ջրային ռեսուրսներ 43

7.3 Ազդեցությունը հողածածկի, կենսաբազմազանության վրա 43

8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 43

8.1. Մոնիտորինգ 44

9. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ 45

10. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 46

11. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 47

Հավելված 1. Բնապահպանական կառավարման պլան 47

Հավելված 2. Մոնիթորինգի/մշտադիտարկումների/ պլան 52

Հավելված 3. Ճարտարապետահատակագծային առաջադրանք 54

Հավելված 4. Անշարժ գույքի սեփականության վկայական 55

Հավելված 5. 3-րդ հանրային քննարկումների հայտարարություն, մասնակիցների ցանկ և արձանագրություն 60

Հավելված 6. Փորձաքննական պետ տուրքի վճարման անդորրագիր 64

Հավելված 7. Տեխնիկական առաջադրանք 65

Հավելված 8. Այլ համաձայնություններ 70

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախատեսվող գործունեություն	Գրականության և մոմի վաճառակետի կառուցում /ք. Երևան. Կենտրոն վարչական շրջան, Թումանյան 71, Սբ. Զորավոր Աստվածածին եկեղեցու տարածքում/
Նպատակը	Գրականության և մոմի վաճառակետի կառուցում
Ձեռնարկող	«Հայաստանյաց Առաքելական Եկեղեցի» /Մայր Աթոռ Սբ. Էջմիածին/
Կառուցապատող	
Ձեռնարկողի հասցե	ք. Երևան, Թումանյան փ. 2-րդ փակուղի
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս	Հեռ.՝ 093001662, 077382882 Էլ-փոստ՝ ececaucasus@gmail.com
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ ք. Երևան Կենտրոն վարչական շրջան, Թումանյան 71,
Կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը	3443.11 քմ,
Կառուցապատման ընդհանուր մակերես	հողամասում նախագծված շինության կառուցապատման *մակերեսը* կազմում է 18.90քմ է, կառույցի ծավալը՝ 77.5 խմ

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախագծի պատվիրատու և նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում (այսուհետ՝ Կառուցապատող) Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին /Մայր Աթոռ Սբ. Էջմիածին/: Համաձայն նախագծի ք. Երևան. Կենտրոն վարչական շրջան, Թումանյան 71 հասցեում, Սբ. Զորավոր Աստվածածին եկեղեցու տարածքում նախատեսվում է կառուցել Գրականության և մոմի վաճառակետ:

Նախագծային աշխատանքներն իրականացվել են «ԱՐՄԼԵՎ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ կողմից: Նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել

- Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրած նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանքը/ 01118-0711-Գ-4512-810 տրվ. 01.09.2020թ.
- Տ. Գրիգոր քահանայի լիազորագիրը
- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համաձայնեցումը գործունեության իրականացման համար:

Գործունեությունն իրականացվելու է Սբ. Զորավոր Աստվածածին եկեղեցու տարածքում, որը զբաղեցնում է 3443.11 քմ և սեփականության իրավունքով պատկանում է կառուցապատողին /Հայաստանյաց Առաքելական Եկեղեցի Մայր Աթոռ Սբ. Էջմիածին/: Նույն հողամասում, եկեղեցուս շինությունների սպասարկման համար հատկացված տարածքում նախատեսված է *Գրականության և մոմի վաճառակետի կառուցում: Այդ շինության* կառուցապատման *մակերեսը* կազմում է 18.90քմ է, կառույցի ծավալը՝ 77.5 խմ:

Նախագծային լուծումները համաձայնեցվել են Մայր Աթոռի և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության /ԿԳՄՍ/:

Նաաախագիծը մշակվել է ՀՀ գործող շինարարական նորմատիվային պահանջներին համապատասխան:

Կենտրոն վարչական շրջան, Թումանյան 71 հասցեում, Սբ. Զորավոր Աստվածածին եկեղեցու տարածքում նախատեսվող *Գրականության և մոմի վաճառակետի* կառուցումը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի դրույթների, որպես նախատեսվող գործունեություն ենթակա է փորձաքննության, որի համար պահանջվում է շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) պատրաստում և ներկայացում բնապահպանական պետական փորձաքննության և փորձաքննական եզրակացության ստացման:

Նշված գործունեությունը ենթակա է փորձաքննության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ-ի օրենքի Հոդված 14-ի 8-րդ մասի, այն է՝ «Փորձաքննության ենթակա են նաև սույն հոդվածի 3-րդ մասում չթվարկված բոլոր նախատեսվող գործունեությունները, որոնք իրականացվելու են բնության հատուկ պահպանվող և անտառային տարածքներում, պատմամշակութային հուշարձանների սահմաններում, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում: Այս դեպքում փորձաքննությունն իրականացվում է Բ կատեգորիայի ընթացակարգով:» Քանի որ վերը նշված գործունեությունն իրականացվում է պատմամշակութային հուշարձանների սահմաններում, հանդիսանում է «Բ» կատեգորիա, որի համար պահանջվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի

և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հաշվետվության /ՇՄԱԳ/ փաստաթղթերի մշակում և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից բնապահպանական պետական փորձաքննության իրականացում և եզրակացության ստացում:

2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և/կամ նվազեցմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները, նախատեսել գործունեության դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման միջոցառումները:

2.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջով /այսուհետև՝ օրենք/ փորձաքննության ենթակա նախաձեռնության իրականացումից առաջ անհրաժեշտ է շրջակա միջավայրի գնահատման փորձաքննության դրական պետական եզրակացություն, որը տրվում է լիազոր մարմնի /ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության/ կողմից: Օրենքի հոդված 14-ի 4. կետի 4) ենթակետի՝ Գրականության և մոմի վաճառակետի կառուցումը /ք. Երևան. Կենտրոն վարչական շրջան, Թումանյան 71, Սբ. Զորավոր Աստվածածին եկեղեցու տարածքում/ նախատեսվող գործունեություն դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեություն և ՇՄԱԳ փաստաթուղթը կազմվում է Բ կատեգորիային ներկայացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պահանջներով:

Բ կատեգորիայի գործունեության դեպքում պետական փորձաքննական եզրակացություն ստանալու գործընթացը կատարվում է երկու՝ նախնական և հիմնական գնահատման փուլերով, որի ընթացքում տեղի են ունենում 4 հանրային լսումներ /քննարկումներ/: Փորձաքննության գործընթացը մեկնարկում է հանրային լսումներին նախնական գնահատման հայտի ներկայացմամբ, որը պարունակում է նախատեսվող գործունեության և գործունեության տարածաշրջանի շրջակա միջավայրի առկա իրավիճակի մասին հակիրճ /նախնական/ տեղեկատվություն, նախատեսված գործունեության բնապահպանական ազդեցության և այդ ազդեցության մեղմման համար նախատեսվող միջոցառումների մասին տեղեկատվություն: Նախաձեռնողը կազմակերպում է առաջին և երրորդ հանրային լսումները ազդակիր համանյքում և լսումների արձանագրության հետ նախնական գնահատման հայտը և ՇՄԱԳ հաշվետվությունը ներկայացնում է փորձաքննական կենտրոն: Կենտրոնի կողմից իրականացվում է նախնական գնահատման հայտի և ՇՄԱԳ-ի ուսումնասիրությունը և փորձաքննական աշխատանքները: Փորձաքննական կենտրոնի կողմից կազմակերպվում է 2-րդ և 4-րդ հանրային քննարկումները: Նախնական փուլում նախատեսվող գործունեության դասակարգման /կատեգորիայի/ վերաբերյալ

կայացվում է որոշում և ձեռնարկողին տրամադրում է տեխնիկական առաջադրանք : Ձեռնարկողի կողմից մշակում է Շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման փաստաթուղթը /այսուհետև՝ ՇՄԱԳ/, կազմակերպում է 3-րդ հանրային քննարկումները և ՇՄԱԳ հաշվետվությունը կից փաստաթղթերով և քննարկումների արդյունքներով ներկայացնում է լիազոր մարմնին հիմնական փորձաքննության համար: 4-րդ հանրային լսումներին ներկայացվում է շրջակա միջավայրի նախարարության դիտողությունների հաշվառումով լրամշակված ՇՄԱԳ-ը, որի հիման վրա էլ լիազորված մարմինը տալիս է պետական փորձաքննական /դրական կամ բացասական/ եզրակացություն:

Հանրային ծանուցման և լսումների /քննարկումների/ իրականացման կարգը կարգավորվում է ՀՀ կառավարության 19 11 2014 N1325-Ն որոշումով:

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրական և կարգավորիչ շրջանակն ընդգրկում է ավելի քան 30 բնապահպանական օրենքներ: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերն ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (2015). 10-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ ընդերքը և ջրային ռեսուրսներ հանդիսանում են պետության բացառիկ սեփականությունը, իսկ հոդված 12՝ պետության խթանիչ դերը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման և բնական պաշարների ողջամիտ օգտագործման գործընթացում՝ հաշվի առնելով կայուն զարգացման սկզբունքները և պատասխանատվությունն ապագա սերունդների առջև, ինչպես նաև յուրաքանչյուր ոքի պարտավորությունը շրջակա միջավայրի պահպանման գործընթացում:

ՀՀ Օրենքը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014) (Հոդված 14, կետ 6, հոդված 16) պահանջում է իրականացնել ծրագրերի բնապահպանական գնահատում, զննությունն ու ըստ կատեգորիաների դասակարգում կախված գործունեության ձևից, ինչպես նաև ենթարկել պետական փորձաքննության և ստանալ փորձագիտական եզրակացություն:

ՀՀ Օրենքը Թափոնների մասին (2004) կարգավորում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքագրումը, տեղափոխումը, պահեստավորումը, վերամշակումը և տեղադրումը ՀՀ-ում:

ՀՀ Օրենքը Բնապահպանական Վերահսկողության մասին (2005) կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ;

ՀՀ Օրենքը Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին (2000) կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:

ՀՀ Օրենքը Քաղաքաշինության մասին (1998)(Հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղեկատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը: Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N11- Ն «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում Շինարարական նորմերը հաստատելու մասին» (14 հունվար 2008) (Գլուխ IX):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 44 Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ (28 ապրիլի 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003) պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

ՀՀ Կառավարության արձանագրային որոշում N 30 «Շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմաններին հավանություն տալու մասին» (23 հուլիսի 2009), որը սահմանում է շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմանները, երկրորդային ռեսուրս հանդիսացող թափոնների օգտագործման անվանացանկերը, շինարարության և քանդման թափոնների տեսակների ցանկերը:

ՀՀ կառավարության 16.02.2006թ. թիվ 392-Ն որոշում «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբեր համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին»,

ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ. թիվ 24-Ն հրաման՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»,

Ուղեցույցներ և ստանդարտներ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2018 թ), որը պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտներ, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի կողմից մշակված «Շինարարական աղբի կառավարման» ուղեցույցները:

4 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին /Մայր Աթոռ Սբ. Էջմիածին/ մտադիր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջան, Թումանյան 71, Սբ. Զորավոր Աստվածածին եկեղեցու տարածքում, եկեղեցու սպասարկման նպատակով «Գրականության և մոմի վաճառակետի» կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի համար ստանալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն, ինչը պահանջվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ներկայացվող գործունեությունը նախատեսվում է իրականացնել Ք. Երևան. Կենտրոն վարչական շրջան, Թումանյան 71 հասցեում, Սբ. Զորավոր եկեղեցու տարածքում: Նկ.1.-ում ներկայացված է նախատեսվող գործունեության տեղադիրքը և իրավիճակային հատակագիծը:

Նախատեսվող գործունեության հողամասը գտնվում է Երևան քաղաքի կենտրոնական մասում, Թումանյան-Պուշկին փողոցների միջանկյալ հատվածում: Հողամասը, որտեղ իրականացվելու է գործունեությունը, կառուցապատված շենք-շինություններով զբաղեցված հարթ տարածք է: Հողամասում առկա են՝ Սբ. Զորավոր Աստվածածին եկեղեցին, գավիթ, Անանիա Առաքիալի մատուռ, ծառայողի միահարկ սենյակ, պարսպապատ մուտքի շքակամար: Կառուցապատվող տարածքը գտնվում է Սբ. Զորավոր Աստվածածին եկեղեցու պահպանական գոտում: Եկեղեցին հանդիսանում է հանրապետական նշանակության հուշարձան /պետ. ցուցիչ՝ հ. 72/: Կառուցվող շինության ճակատները նախատեսված է իրականացնել եկեղեցու միջավայրին համահունչ: Տեղանքի նիշերի ռելիեֆի տարբերության հաշվին կառույցում նախատեսված է նկուղային հարկաբաժին: Տանիքը նախատեսված է երկլանջ՝ կազմակերպված ջրահեռացմամբ:

Հողամասի հարևանությամբ Թումանյան, Պուշկին փողոցներն են բազմաբնակարան բնակելի և հասարակական շենքեր, ներբակային ճանապարհներ: Համաձայն նախագծի կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0.344311հա, որում սույն նախագծով կառուցվող շինության մակերեսը կկազմի 18.90 քմ:

Նախագծման աշխատանքների համար հիմք են հանդիսացել սեփականատիրոջ՝ Մայր Աթոռի կողմից տրված նախագծային առաջադրանքը, Երևանի քաղաքապետարանի կողմից 01.09.2020թ տրվ 01118-0711-Գ-4512-810 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանքը/ (Հավելված 3.), անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը հ. 1491492 տրվ. 28.03.2005թ: Գործունեությունն իրականացվելու է վկայականով ամրագրված հողամասի սահմաններում:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, օգտագործման նպատակը՝ եկեղեցու և շինությունների սպասարկման համար: Նաախագծված շենքի նպատակային նշանակությունը հասարակական է՝ նախատեսված եկեղեցու օգտագործման համար:

Կառուցապատվող տարածքում բացակայում են ինժեներական ցանցերը և այլ ենթակառուցվածքները, որոնք շինարարական աշխատանքների ընթացքում ենթակա են տեղափոխման: Կառուցապատվող տարածքում բացակայում են հատման ենթակա ծառերը կամ թփերը:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն նախնական գնահատման հաում: Գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

- Օդային ավազանի աղտոտում՝ շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,
- Շինարարության փուլում մերձակա բնակչությանը և օբյեկտներին պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,
- Շինարարական մեքենաների և տեխնիկայի աշխատանքով պայմանավորված տեղի երթևեկության խափանում,
- շինարարական աշխատանքների ընթացքում հողային ծածկույթի, բուսածածկի վնասում,
- Հողերի և ջրային ռեսուրսների աղտոտում շինարարության ընթացքում առաջացող թափոններով, շինարարական և կենցաղային աղբով,
- Աշխատողների առողջությանը հասցվող վնաս՝ շինարարական աշխատանքների ընթացքում:

Հայտում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են վերը նշված ազդեցությունների և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչների վրա կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Կառուցապատման նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակում,
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,
- Բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և հանրային քննարկումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություն, մասնակիցների ցանկ տեսաձայնագրություն) ներկայացում շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության փուլերում:

Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

Նկ.1 Նախագծվող Գրականության և մոմի վաճառակետի տեղադիրքը և իրավիճակային հատակագիծը, ք.Երևան:

4.1. Նախագծային և տեխնոլոգիական լուծումները

Գրականության և մոմի վաճառակետի կառուցման համար նախատեսվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Թումանյան և Պուշկին փողոցների խաչմերուկում:

Ներկայացված նախագծով հաշվի են առնվել Սբ. Զորավոր Աստվածածին եկեղեցու տարածքի հուշարձանների մորֆոլոգիական առանձնահատկությունները և կառուցվածքի ազդեցությունը առաջարկվող կրպակի ճարտարապետական հորինվածքի ձևաստեղծման վրա: Նորակառույցը լրացնելու է այն միջավայրը որտեղ կազմակերպվել է Աստվածածին եկեղեցին, գավիթը, Անանիա Առաքիալի մատուռը:

Նախագծվող շինությունն ունի ուղղանկյուն հատակագիծ՝ 4.4x3.35մ առանցքային չափերով: Այն նախագծված է միահարկ՝ նկուղային հարկով: Հարկի բարձրությունը փոփոխական է՝ 2.485-ից մինչև 3.025մ , իսկ նկուղային հարկի բարձրությունը 2.20մ է:

Տանիքը լանջավոր է, բետոնե, կղմինդրով՝ կազմակերպված ջրահեռացմամբ: Շինությունն ունի կամարակապ բացվածքներ:

Պատերը միաձույլ երկաթ/բետոնե 20 սմ հաստությամբ՝ երեսապատված տուֆե սալերով են: Ծածկը և վերնածածկը միաձույլ, ե/բետոնե, 15սմ հաստությամբ են: Աստիճանները միաձույլ, ե/բետոնից են:

Սյուները նախատեսված է իրականացնել միաձույլ երկաթ/բետոնից20x20սմ չափերով B20 դասի ծանր բետոնից:

Հիմնատակի գրունտներն ընդունվել են երկրորդ կարգի: Տարածքում գրունտային ջրերը բացակայում են, պայմանները բարենպաստ են շինարարության իրականացման համար:

Շինհրապարակի տարածքից անձրևաջրերի հեռացումը կիրականացվի կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Անձրևընդունիչ հորից անձրևաջրերը կհեռացվեն տարածքից կմիացվեն քաղաքային հեղեղատար ցանցին:

Շինության նկուղային հարկում նախատեսված է ներածող-արտածող համակարգ, ընդհանուր փոխանակային օդափոխություն՝ ներածող օդի բնական և արտածող օդի արհեստական դրդմամբ:

Վաճառակետի էլեկտրասնուցումը, ջրամատակարարումը, ջրրահեռացումն ապահովվելու է տարածքում գործող համանուն ցանցերից: էլեկտրասնուցումը իրականացվում է Երիցտուն մասնաշենքի վահանից՝ համապատասխան կտրվածքի մալուխով:

Շինությունում նախատեսված է հրդեհի ահազանգման համակարգի իրականացում, որը բաղկացած է ընդունիչ-հսկիչ սարքից, ղեկավարման ստեղնաշարից և ԱԻՆ միանալու սարքից:

Նախագծով նախատեսված է արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ:

Շենքերի սեյսմազինվածության մակարդակը նախատեսված ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման 3-րդ գոտուն համապատասխան

Շինության տեխնիկական ցուցանիշներ

- ***Կառուցապատման մակերես 18.90 քմ***
- ***Կառույցի մակերեսը /առանց երեսապատման/ 32.70 քմ***
- ***Կառույցի ծավալը 77. 50 խմ***

Շինության հողային աշխատանքների ծավալները ներկայացնում են՝

- ***Հանվող հողային զանգված – 72 խմ***
- ***Հետլիցք՝ 8 խմ,***
- ***Մնացորդային զանգված – 64 խմ:***

Նախագիծը մշակված է համաձայն ՀՀ տարածքում գործող հետևյալ նորմատիվային փաստաթղթերի՝

Ըստ նշված բնութագրի ՍՆԻՊ 1.04.03-2008-ի նորմատիվներով հաշվարկված է շինարարության տևողությունը:

ՀՀՇՆ 30-01-2014 քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում

ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի և Շինությունների Հրդեհային Անվտանգություն

ՀՀՇՆIv-11.03.03-02 Ավտոկայանատեղեր

Կառուցապատման վերաբերյալ ընդհանուր ցուցանիշները բերված են ստորև:

4.2.Շինարարական աշխատանքների կազմակերպում

Գրականության և մոմի վաճառակետի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական ցանցեր
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

Գրականության և մոմի վաճառակետի շինարարական աշխատանքների տևողությունը կկազմի 5 ամիս, որից նախապատրաստական աշխատանքների տևողությունը կկազմի 15 օր: Ներկայացվող գործունեության նախաշինարարական փուլում շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է կազմակերպել շինհրապարակ՝ ցանկապատով և այլ անհրաժեշտ ենթակառույցներով:

Նախաշինարարական աշխատանքների փուլում, համաձայն շինաշխատանքների կազմակերպման նախագծի, կիրականցվեն շինարարական հրապարակի կազմակերպման գործողությունները: Հրապարակի կազմակերպումը կիրականացվի բացառապես նախագծվող հողատարածքի վարչական սահմանների ներսում, որտեղ ըստ պլանի կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- հողատարածքի ժամանակավոր մետաղական ցանկապատում տարածքի համահարթեցման գործողություններ
- Կազմակերպել շինհրապարակ՝ ցանկապատով և այլ անհրաժեշտ ենթակառույցներով,
- լուսատուների տեղադրում և հրապարակի լուսավորության (≥ 20 լք) ապահովում
- ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքերը՝ ապահովելով շինարարական հրապարակում սանիտարահիգենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, զուգարան, աշղեկի աշխատասենյակ և այլն)
- շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրեր, տեղափոխում հատկացված վայր,
- շինաշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիների և դրանց երթևեկության սահմանման միջոցառումներ:

Հիմնական աշխատանքների փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- ***Շինարարական/մոնտաժման աշխատանքների*** իրականացում, որի ժամանակ կիրականացվեն *Գրականության և մոմի վաճառակետի* շինարարական աշխատանքները:

Հիմնական փուլում կատարվում է կառույցի շինարարություն ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի: Բոլոր տիպի շինարարական աշխատանքները անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները ըստ ՍՄԻՊ III-IV. 2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք կատարել պահպանելով շին. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինհրապարակում ոչինչ չի պատրաստվում, ամեն ինչ բերվում է պատրաստի վիճակում, մասնագիտացված կազմակերպություններից: Շինհրապարակում ոչինչ չի պահեստավորվում: Առաջացող բոլոր տեսկի թափոնները և մնացորդային գրունտը առանց պահոստավորվելու տեղափոխվելու են համապատասխան աղբավայրեր, կամ հանձնվելու են համապատսխան վերամշակող կազմակերպությունների, կրկնակի օգտագործման համար:

Շինհրապարակի տարածքից անձրևաջրերի հեռացումը կիրականացվի կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Անձրևընդունիչ հորից անձրևաջրերը կհեռացվեն տարածքից կմիացվեն քաղաքային հեղեղատար ցանցին:

Ժամանակավոր շինությունների պետք է բացառել, կամ հասցնել նվազագույնի, հաշվի առնելով այն, որ շինհրապարակը գտնվում է Երևան քաղաքի կենտրոնում: Առաջարկվում է նախատեսել կոնտեյների տիպի հատուկ շինություն՝ որը կծառայի աշխղեկի սենյակ, գործիքների պահեստ, մեխանիկական արհեստանոց, կիսափակ պահեստ:

Շինհրապարակում նախատեսվում է կազմակերպել սանիտարահիգենիկ նշանակության հարմարանք /բիոզուգարան/ օբյեկտի վերաբերյալ տեղեկատու ցուցանակ, անվտանգության նշանների ցուցատախտակ, մեքենաների անվադողերի լվացման կետ, պահակակետ, պահեստավորման հարթակ, հակահրդեհային միջոցների վահանակ և աղբաման՝ կկենցաղային աղբի հեռացման համար:

4.3. Հողային աշխատանքներ

Շինարարական աշխատանքների տևողությունը գնահատվել է 5 ամիս, որից հողային աշխատանքների տևողությունը ըստ աշխատանքային նախագծի գնահատվել է 15 օր: Առաջացող հողային զանգվածները գնահատվում են ստորև ներկայացվող ծավալներով.

- *հեռացվող գրունտ/հանույթ՝ 72 խ.մ, որում բացակայում է բուսահողը, քանի որ տարածքը կառուցապատված և ասֆալտապատ է:*
- *տեղափոխվող և թափոնակույտվող հանույթ՝ 64 խմ,*
- *հեղլիցք՝ 8 խմ:*

Հողային աշխատանքների ընթացքում առաջացած *64 խմ* մնացորդային գրունտը կտեղափոխվի և կթափոնակույտվի Երևանի քաղաքապետարանի կողմից թույլատրված աղբավայրում:

Շինարարության ընթացքում կօգտագործվեն շինարարական կազմակերպության շինարարական մեքենա-սարքավորումները, իսկ բացակայության դեպքում կիրականացվի անհրաժեշտ տեխնիկայի վարձակալություն: Տեղամասի հողային աշխատանքները կիրականացվեն հիմնականում մեքենայացված եղանակով (KOMATSU PC 400-7 կամ Hyundai 170W տիպի էքսկավատոր), իսկ դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից և շինարարական ինդուստրիայի ձեռանարկություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը առաջարկվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- Առանձին ամրանային ձողերը, հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն շինարարական հրապարակ անմիջապես օգտագործմանհամար՝ բացառելով դրանց պահեստավորումը և տեղադրումը տեղում:
- Բետոնային խառնուրդը՝ միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար կառաքվի անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով՝ Երևան քաղաքին մոտ գտնվող բետոնաշաղախային հանգույցներից՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը հրապարակում:
- Հարդարման նյութերը կարող են առաքվել շինհրապարակ անմիջապես օգտագործման նպատակով:

Հրապարակում սորոն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) չեն պահեստավորվի, կամ կպահվեն պաստառներով ծածկված վիճակում:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել անմիջապես տարածքում առկա՝ եկեղեցուն սպասարկող քաղաքային ջրագծից:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը կիրականացվի մեքենայացման բազայում:

Շինարարական աշխատանքների ընթացքում վտանգավոր թափոնների առաջացումը և հնարավոր ազդեցությունները բացառելու նպատակով շինարարության ընթացքում քսայուղերը, հեղուկ վառելիքը կպահվեն փակ տարաներով և անթափանց հիմքերի վրա (բետոնե, մետաղական կամ ավազե), ինչը կբացառի հողային շերտի հնարավոր աղտոտումը: Շինաշխատանքների ավարտից հետո նշված նյութերի մնացորդային քանակները որպես երկրորդային նյութ կօգտագործվեն շինարար կապալառուի կողմից այլ աշխատանքներում:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են Նախնական գնահատման հայտի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Շենքի կառուցապատման շինարարական աշխատանքներում աշխատողների միջին թիվը՝ ըստ ՇԿՆ-ի, հաշվարկվել է 20 մարդ, որից ինժեներական կազմը՝ 3 մարդ, ծառայողական աշխատողներ (մեքենավար և օգնական)՝ 5 մարդ, արհեստագործներ և բանվորներ՝ 12 մարդ:

4.4. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Գրականության և մոմի վաճառակետի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար: Ջրամատակարարումն իրականացվելու է տեխնիկական պայմանների համաձայն՝ գոյություն ունեցող եկեղեցուն սպասարկող ջրատարից, որը միացված է քաղաքային ջրամատակարարման ցանցին: Իսկ կոյուղին միացված է քաղաքային կոյուղատարին: Հակահրդեհային նպատակներով ջրի պահանջարկը 10լ/վրկ:

Շինարարական մեքենասարքավորումների անվանացանկը ներկայացված է Աղ.3-ում ստորև.

Աղ. 3 *Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը:*

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Էքսկավատոր	Hyundai 170W-7	2
2	Բուլդոզեր	KOMATSU D37-EX-22	1
3	Շարժական կոմպրեսոր	ЗИФ-55В	1
4	վերամբարձ ավտոկռունկ	Галичанин КС-65713-1	2
5	Տոփանիչ	CR 3/60	4
6	Գույքային կաղապարամած	կոմպլ.	6
7	Թրթրիչ մակերեսային էլեկտրական	ИВ-91А	6
8	Թրթրիչ խորքային էլեկտրական	ИВ-102А	6
9	Փոխարկիչ թրթրիչների համար	ИВ-4	6
10	Եռակցման տրանսֆորմատոր	СТН-500	6
11	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	6
12	Ավտոբետոնախառնիչ	СБ-69Б	հաշվարկով
13	Ավտոբետոնատար	КрАЗ-65055	հաշվարկով
14	Ինքնաթափ ավտոմոբիլ	МАЗ-5550	հաշվարկով

5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու /Մայր Աթոռ Սբ. Էջմիածին/ Գրականության և մոմի վաճառակետը նախատեսվում է կառուցել Կենտրոն վարչական շրջան, Թումանյան 71 հասցեում, Սբ. Զորավոր Աստվածածին եկեղեցու տարածքում: Կառուցապատվող տարածքը Սբ. Զորավոր Աստվածածին եկեղեցու շենք-շինություններով զբաղեցված, կառուցապատված տարածք է: Հարևանությամբ Թումանյան, Պուշկին փողոցներն են, բազմաբնակարան բնակելի և հասարակական շենքեր, ներբակային ճանապարհներ:

Հողամասում առկա են՝ Սբ. Զորավոր Աստվածածին եկեղեցին, գավիթ, Անանիա Առաքիալի մատուռ, ծառայողի միահարկ սենյակ, պարսպապատ մուտքի շքակամար: Այն հանդիսանում է հանրապետական նշանակության հուշարձան /պետ. ցուցիչ՝ հ. 72/: Կառուցվող Գրականության և մոմի վաճառակետի ճակատները նախատեսված է իրականացնել եկեղեցու միջավայրին համահունչ:

5.2.Ռելիեֆը

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում: Ռելիեֆի հիմնական տարրերն են Կոտայքի և Ջրվեժ-Ջրվեժի հրաբխային սարավանդների լանջերը, ինչպես նաև Գետառ գետի կիրճի զառիթափ լամջերը:

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տեղամասն ունի հարթ, ռելիեֆային բնույթ: Հետազոտվող տեղամասը տեղադրված է Քանա-քեռ-Արաբկիրի հրաբխային սարավանդի սահմաններում, Կոնդի բլրաշարի վերջնամասում, Հրազդան գետի ձախափնյա ջրբաժանի հարավ-արևելյան լանջերի վրա:

5.3. Տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները

Տարածաշրջանի և Կենտրոն վարչական շրջան, Թումանյան 71 հասցեում, Սբ. Զորավոր Աստվածածին եկեղեցու տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենի դոլերիտա-բազալտային լավային հաստվածքները, որոնք ուսումնասիրվող տեղամասում ունեն համեմատաբար խորը տեղադրում և հիմնականում ծածկված են ժամանակակից նստվածքներով ՝ ներկայացված էլյուվիալ, դելյուվիալ-պրոլյուվիալ խոշորաբեկորային, կավային, ավազային և տեխնածին գրունտներով:

Լիթոլոգիական տեսակետից տարածքում կարելի է առանձնացնել հետևյալ երկրաբանական տարբերակները՝

1. Ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ գրունտեր, ներկայացված գորշ կավավազով ամուր կազմության, փթաց բույսերի մնացուրդներով և արմատներով:

2. Մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

3. Մեծաբեկորային գրունտ, խճի և մանրախճի խառնուրդով, քարակտորների արանքները լցված են մինչև 10% կավավազային և ավազային լցանյութով: Քարակտորները ներկայացված են հրաբխային ապարներով:

4. Վերին չորորդական լճա-ալյուվիալ նստվածքներ ներկայացված Խճա-մանրախճային գրունտներով մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30 -35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Համաձայն կատարված աշխատանքների տվյալների տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են գրունտների հետևյալ տարատեսակները՝

- ասֆալտաբիտոեումային ծածկոց
- լիցքային գրունտ
- խոշորա-բեկորային գրունտներ:

5.4. Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանի և հետազոտվող տեղամասի ստորգետնյա ջրերը կապված են հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ, որոնք պատկանում են լավատակի, միջլավային տարատեսակներին, ինչպես նաև բերվածքային ալյուվիա-պրոլյուվիալ առաջացումների հետ, որոնք հանդիսանում են հունատակի, վերաողողահունային տարատեսակներին պատկանող ջրեր: Ներկայացված են նաև՝ Հրազդան գետի բարձր դարավանդի և Գետառ գետի պալեոհունի ալյուվիա-պրոլյուվիալ առաջացումների հետ կապված՝ ծակոտկենա-դատարկություններով գրունտային ջրեր:

Հիդրոերկրաբանական տեսակետից դիտարկվող տեղամասերում տարածված են միջլավային և լավատակի, մասամբ նաև վերին հատվածներում, շերտային տիպի ջրերը, որոնք ունեն համեմատաբար խորը տեղադրում:

5.5.Սեյսմիկ բնութագրերը

Ուսումնասիրվող տարածքի գրունտները (ըստ սեյսմիկ հատկությունների) II կարգի են: Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ուսումնասիրվող տեղամասում գրունտների հորիզոնական առավելագույն արագացումների և գերակայող պարբերությունների գնահատման համար հիմք է ընդունվել ՀՀՇՆ II-6.02-2006 <<Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր>> նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտևորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:

Սեյսմա-տեկտոնական տեսակետից շրջանը և տեղամասը տեղադրված է Երևանի վերադրված միջլեռնային ճկվածքի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Շրջանը համարվում է հայկական բարձրավանդակի ամենասեյսմաակտիվ գոտիներից մեկը:

5.6. Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան –30 oC, բացարձակ մաքսիմումը հասնում է +42 oC: Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմատոլոգիա» СНиП II-7.01-96 տվյալների համաձայն:

Ձյան ծածկոցի հաստությունը հասնում է 50սմ, ճնշումը՝ 70կգ/մ2: Հողի սառչելու առավելագույն խորությունը կազմում է 70սմ:

Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմատոլոգիա» СНиП II-7.01-96 տվյալների համաձայն:

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Երևան "Ագրո" օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութա-բանական կայան	Օդերևութա-բանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C^0												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան	942	-4,2	-1,2	5,2	12,3	17,0	21,6	25,5	25,3	20,6	13,3	5,6	-0,8	11,7	-30	41

Աղյուսակ 2.2. Օդի հարաբերական խոնավությունը Երևան "Ագրո" օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութա-բանական կայան	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
														հունվարին	օգոստոսին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան	78	74	64	58	58	51	45	45	49	61	74	79	61	62	33

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները Երևան "Ագրո" օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների Քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Ձնածածկույթ		
	Ըստ ամիսների													**Առավելագույն տասնօրյակա-յին բարձրությունը,սմ**	**Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը**	**Ձյան մեջ ջրի Առավելա-գույն քանակը,մմ**
	22	24	31	41	46	27	16	8	11	27	26	23	302			
Երևան	20	26	33	25	40	25	21	24	29	33	23	24	40	46	41	113

5.7.Օդային ավազան

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ-ի կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 16 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 211 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ:

ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայան-ներում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի, փոշու և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշման:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 3 դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

Ըստ Էկոմոնիթորինգի 2020 թվականի տեղեկագրի Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական և միջին տարեկան կոնցենտրացիաները չնայած գտնվում են սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի (ՍԹԿ) տիրույթում, բայց ամսվա ընթացքում և քաղաքի տարբեր հատվածներում դիտվում են գերազանցումներ, ինչը պայմանավորված է ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման այլ աղբյուրներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

Երևան քաղաքի մթնոլորտային օդում ածխածնի մոնօքսիդի համեմատաբար բարձր կոնցենտրացիաներ դիտվում են առավոտյան՝ 8:00-11:00 ժամանակահատվածներում և երեկոյան՝ 18:00-23:00 ժամանակահատվածներում:

Սույն հայտում նախատեսված շինարարական աշխատանքները շատ փոքրածավալ են և ժամանակավոր, չենն կարող էական ազդեցություն ունենալ մթնոլորտային օդի աղտոտվածծության վրա: Արտանետումների նվազեցմանն ուղղված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

Երևան քաղաքում որոշված աղտոտիչների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Ազոտի երկօքսիդ (NO2)
Երևան
Կոնց. (մգ/մ3)
0,05
0,04
0,03
0,02
0,01
0,00
2019թ.միջ. կոնց.
2020թ.միջ. կոնց.
ՍԹԿ միջ.
Ամիսներ
I II III IV V VI VII VIII IX X XI XII


Փոշի
Երևան
Կոնց. (մգ/մ3)
0,21
0,18
0,15
0,12
0,09
0,06
0,03
0,00
2019թ.միջ. կոնց.
2020թ.միջ. կոնց.
ՍԹԿ միջ.
Ամիսներ
I II III IV V VI VII VIII IX X XI XII


Ծծմբի երկօքսիդ (SO2)
Երևան
Կոնց. (մգ/մ3)
0,06
0,05
0,04
0,03
0,02
0,01
0,00
2019թ.միջ. կոնց.
2020թ.միջ. կոնց.
ՍԹԿ միջ.
Ամիսներ
I II III IV V VI VII VIII IX X XI XII

5.8. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է էկոմոնիտորինգի կողմից, որի տվյալները 2014 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդան գետի Երևանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ$_5$-ով, ԹՔՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Նախատեսվող գործունեությունը ոչ ենթադրում ջրային համակարգերի, կամ ջրային ռեսուրսների վրա ազդեցություններ:

5.9. Հողային ռեսուրսներ և հողօգտագործումը

Կառուցապատվող տարածքն ըստ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի /հ. 1491492 տրվ. 28.03.2005թ հանդիսանում է «Հայաստանյաց Առաքելական Եկեղեցի» սեփականության իրավունքով տրամադրված գույք: Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու /Մայր Աթոռ Սբ. Էջմիածին/ Գրականության և մոմի վաճառակետը նախատեսվում է կառուցել Կենտրոն վարչական շրջան, Թումանյան 71 հասցեում, Սբ. Ջորավոր Աստվածածին եկեղեցու տարածքում նշված վկայականով ամրագրված հողամասի սահմաններում:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, օգտագործման նպատակը՝ եկեղեցու և շինությունների սպասարկման համար: Նաախագծված շենքի նպատակային նշանակությունը հասարակական է՝ նախատեսված եկեղեցու օգտագործման համար:

Կառուցապատվող տարածքում բացակայում են ինժեներական ցանցերը և այլ ենթակառուցվածքները, որոնք շինարարական աշխատանքների ընթացքում ենթակա են տեղափոխման: Կառուցապատվող տարածքում բացակայում են հատման ենթակա ծառերը կամ թփերը, նաև հողային ծածկույթը և բուսահողը, քանի որ տարածքն ամբողջովին կառուցապատված և ասֆալտապատ է:

Վաճառակետի նախագիծը ենթադրում է շատ փոքրածավալ հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ

72 խմ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: 64 խմ ծավալով մնացորդային հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք: Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Շինության հողային աշխատանքների ժամանակ, գրունտի մշակման աշխատանքներից առաջացող հողային հանույթները ժամանակավոր կուտակվելու են կազմակերպված շինարարական հրապարակի տարածքում, հետագայում օգտագործվելու հետլիցքի, կամ տարածքների հարթեցման համար: Իսկ նմացորդային գրունտը հեռացվելու է Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

Տարածաշրջանի հողային ծածկույթը. Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով լանդշաֆտային գոտում: Երևանի հողերը տիպիկ գորշ, կիսաանապատային են՝ սննդանյութերով աղքատ, հարուստ կարբոնատներով: Այս տիպի հողերը սակավազոր են, ունեն կավավազային կազմ, աչքի են ընկնում կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ և քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով:

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Ներկայացվող տարածքն ամբողջությամբ կառուցապատված է և այստեղ բաց հողային մակերեսներ չկան:

Համաձայն Երևանի գլխավոր հատակագծի քաղաքի տարածքը աղտոտված է ծանր մետաղներով և մասամբ՝ ռադիոնուկլիդներով: Ըստ ծանր մետաղներով աղտոտվածության քաղաքի տարածքը ներկայումս վերագրվում է միջին աղտոտվածության տարածքներին: Սակայն քաղաքի տարածքում առանձնանում են նաև ուժեղ աղտոտված տարածքներ: Պետք է նշել, որ դիտարկվող տարածքը աղտոտված չէ:

5.10. Կենսաբազմազանություն

Տարածքը գտնվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի խառը կառուցապատման գոտում: Քանի որ տարածքը կառուցապատված է բնակելի, հասարակական, վարչական շենք-շինություններով, սեփական տներով, ավտոտնակներով և այլ շինություններով, ուստի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի շրջանակներում չի դիտարկվում նշված տարածքի կենսաբազմազանությունը, սակայն ստորև բերված է Երևան քաղաքի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տեղեկատվությունը:

<u>Բուսական աշխարհ</u>

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանյան գոգավորությունը տեղաբաշխված ծովի մակերևույթից 860-1390մ բարձրությունների սահմաններում: Երևանյան գոգավորությունում առկա են

հարթավայրային լանդշաֆտային և լավային սարավանդներ, որոնք բաղկացած են կիսաանապատային և նախալեռնային գոտիներից: Երևանի դիտարկվող տարածքում, որտեղ իրականացվելու է նախատեսվող գործունեությունը գերիշխում են լավային սարավանդները, իսկ հարավային լանդշաֆտները՝ Հրազդան և Գետառ գետերի սելավաբերուկ հողատարածքներն են: Երևան քաղաքը գտնվելով ջրազուրկ կիսաանապատային գոտում ընդերքում ունի հարուստ ջրատար շերտեր՝ խորքային ջրեր:

Երևան քաղաքի տերիտորիան Անդրկովկասի ամենաչորային շրջաններից մեկն է, կլիման այստեղ խիստ ցամաքային է, կիսաանապատային: Երևանում ցածր է նաև օդի հարաբերական խոնավությունը, որը ամռան ամիսներին իջնում է մինչև 40%-ի: Երևանում հաճախակի նկատվում է կարճ գարուն, որը բացասական ազդեցություն է ունենում ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի ներկայացուցիչների վրա:

Երևանի հողերը տիպիկ գորշ կիսաանապատային են, աղքատ աննդանյութերով, հարուստ կարբոնատներով, սակավազոր, կավավազային, կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ, շերտաթեփուկավոր կամ փոշեհատիկային կազմությամբ, քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով: Հազարամյակների ընթացքում արհեստական ոռոգման տարբեր տեսակի ագրոմիջոցառումների պարագայում Երևանի տարածաշրջանում առաջացել են կուլտուր-ոռոգելի զգալի հողատարածքներ, որոնք վերածվել են տարբեր տիպի փարթամ կուլտուրական լանդշաֆտների:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝ 1. Ֆրիգանա (ժայռային բուսականություն), 2. Տոմիլյար (անապատային): Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

Պետք է նշել, որ գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն իսկ խախտված, կառուցապատված են՝ զուրկ հողային ծածկույթից և բուսականությունից:

<u>Կենդանական աշխարհ</u>

Շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Համայնքի տարածքում տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրաույն առնետները, տնային մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դոդոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարաոտ սցինկը, օձերից՝

կույր օձուկը, ռնգեղջյուր օձը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր: Հրազդան գետում հանդիպում են ձկների 7 տեսակ:

Պետք է փաստել, որ գործունեության տարածքը գտնվում է քաղաքային միջավայրում, կառուցապատված տարածքում, որտեղ առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ուստի կենդանատեսակների առկայության, կամ տվյալ տարածքում հանդիպելու վերաբերյալ չի դիտարկվում:

5.11. Պատմամշակութային արժեքներ

Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու /Մայր Աթոռ Սբ. Էջմիածին/ Գրականության և մոմի վաճառակետը նախատեսվում է կառուցել Կենտրոն վարչական շրջան, Թումանյան 71 հասցեում, Սբ. Զորավոր Աստվածածին եկեղեցու տարածքում Սբ. Զորավոր Աստվածածին եկեղեցու պահպանական գոտում: Եկեղեցին հանդիսանում է հանրապետական նշանակության հուշարձան /պետ. ցուցիչ՝ հ. 72/:

Փոքր մակերես ունեցող շինության կառուցման համար պահանջվում են փաքրածավալ շինարարական աշխատանքներ, որոն ազդեցությունը մշակութայիին տարածքի վրա էական չի լինի: Մշակութային արժեքների պահպանման գործընթացները և շինարարական աշխատանքները կիրականացվեն ՀՀ գործող օրենսդրական պահանջներին համապատասխան՝ ոլորտին առնչվող պետական լիազոր մարմնի կողմից սահմանված ընթացակարգերին համապատասխան:

Ճարտարապետա-շինարարական նախագիծը ներառում է նաև մշակութային տարածքի նախագիծ, որոնք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցվել են պետական լիազոր մարմնի հետ և ձեռք է բերվել նախնական համաձայնություն: Մշակութային արժեքների պահպանության համար սահմանվել է ընթացակարգ՝ ուղղված հուշարձանի պահպանությանը և ճարտարապետական լուծումներին: Կառուցվող շինության ճակատները նախատեսված է իրականացնել եկեղեցու միջավայրին համահունչ:

5.12. Սոցիալ տնտեսական պայմանները

Ներկայացվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում:

Ստորև բերված են Երևան քաղաքի որոշ սոցիալ-տնտեսական ցուցանիշներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքից[1]:

[1] www.armstat.am

Աղյուսակ 2.5. Երևանի ընդհանուր ցուցանիշները

N	Տարածքը	223 քառ. կմ
1	ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը	0.7 %
2	Գյուղատնտեսական նշանակության հողեր	3 351.2 հա
3	այդ թվում՝վարելահողեր	915.6 հա
4	Վարչական շրջաններ	12
5	Բնակչության թվաքանակը 2015թ. տարեվերջի դրությամբ	1 073.7 հազ. մարդ
6	ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2015թ.	35.8 %

Մայրաքաղաք Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

2017թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

Աղյուսակ 2.6 Երևանի տնտեսության համամասնական տվյալները

✓ արդյունաբերություն՝	41.2%,
✓ գյուղատնտեսություն՝	1.1%,
✓ շինարարություն՝	63.7%,
✓ մանրածախ առևտուր՝	76.4%
✓ ծառայություններ՝	81.4%:

Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են ամբողջ հանրապետության կապն արտաքին աշխարհի հետ):

Երևանի փողոցներում վերջին տարիներին կանաչապատմանհամար, մասնավորապես ծառատունկի, չափանիշներ են կիրառվում: Նախատեսված է տնկել առնվազն 4 սմ տրամագծով, 2-3 տարեկան տնկիներ և բացառապես այն հատվածներում, որտեղ կա ոռոգման համակարգ: Կանաչապատմանը զուգահեռ՝ կստեղծվեն ոռոգման նոր համակարգեր. այս տարի նախատեսվում է շուրջ 5 կմ ոռոգման նոր ցանց կառուցել: 5 տարում Երևանում կտնկվի 500 հազար ծառ, ոչ միայն փողոցներում, այլև անտառ-պուրակներում: Մասնավորապես, այդպիսի նոր տարածք կստեղծվի Նուբարաշենի աղբավայրին հարող հատվածում. ավելի քան 20 հեկտարում կտնկվեն բարձրարժեք բազմամյա թփեր և ծառեր: Հեռանկարում նախատեսվում է անտառ-պուրակի սահմաններն ընդլայնել և ներառել ներկայիս աղբավայրը՝ վերջինիս ծածկումից հետո: Քաղաքի կանաչ կերպարը կփոխվի այն իմաստով, որ կտնկվեն նոր՝ ծաղկող ծառեր և թփեր, կլինեն նաև մի քանի նոր ծաղկատեսակներ:

Նախատեսվում է զարգացնել ուղղաձիգ կանաչապատումը՝ պատերի, վերգետնյա անցումների, պատշգամբների ու այլ հատվածների վրա: Քաղաքի հոբելյանի առիթով Երևանին նվիրված 2800 արծաթափայլ եղևնիները կպահվեն հատուկ տարածքում այնքան ժամանակ, մինչև մասնագետները որոշեն, որ դրանք կարող են ապրել «ինքնուրույն» ու կտնկվեն արդեն իրենց տեղերում: Ըստ այդմ, կզարգացվեն տնկարանային և ջերմոցային տնտեսությունները: Այժմ համայնքն ունի 20 հեկտար տնկարաններ, այդ թվում՝ 6000 քմ ջերմոցային տնտեսություն: Նոր մոտեցմամբ կիրականացվի նաև ծառերի էտը, ընդ որում, էտված ճյուղերն ու փայտանյութը կմանրացվի և կօգտագործվի կանաչապատման ոլորտում:

Աղյուսակ 2.7. Սոցիալական ցուցանիշներ

Սոցիալական ցուցանիշը	***Ընդամենը***	***Կանայք***	***Տղամարդիկ***
Զբաղվածներ, հազ. մարդ	294.3	144.3	160.0
Ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, հազ.մարդ	168.9	104.4	64.5
Աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	17076	-	-

Կենտրոն վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ, Արաբկիր, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների հետ:

Աղյուսակ 2.8. Ազդակիր վարչական շրջանը

Վարչական շրջան	*Տարածքը, հա*	*Բնակչության թվաքանակը 2016 թ. տարեվերջին, հազ.մարդ*
Կենտրոն	1335	1260

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

<u>Շինարարության փուլ</u>

Նախատեսվող գործունեությանազդեցությունը կարելի է բաժանել երկու պայմանական մասի.

- ազդեցությունը շինարարական աշխատանքների ընթացքում,
- ազդեցությունը շահագործման ընթացքում:

6.1 Շինարարական աշխատանքներ

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները և ռիսկերը գնահատվում են նախագծվող *<u>Գրականության և մոմի վաճառակետի</u>* շինարարական աշխատանքերի ընթացքում, մասնավորապես, գնահատվում են անօրգանական փոշու և այլ ծխագազերի արտանետումներ, աղմուկի մակարդակի աճ շին-գործողությունների ընթացքում, սակայն նշված ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված և շատ փոքրածավալ՝ հիմնականում ընդգրկելով նախատեսվող գործունեության տեղամասը:

Նախատեսվող աշխատանքների ընթացքում կառաջանան հետևյալ վնասակար նյութերի արտանետումները. չդիֆերենցված մասնիկներ /փոշի/, ածխածնի մոնօքսիդ, ազոտի երկօքսիդ, մուր /մոխիր, ծծմբի երկօքսիդ:

Ըստ ազդեցության աստիճանի և ինտենսիվության՝ շրջակա միջավայրի վրա բոլոր բացասական ազդեցությունները և ռիսկերը գնահատվում են մինիմալ և կառավարելի գործունեության ընթացքում՝ հաշվի առնելով նախատեսվող շինարարական աշխատանքների ծավալը և բնույթը, ինչպես նաև հեռավորությունը զգայուն ազդակակիրներից:

6.2 Օդային ավազանի աղտոտվածություն և մեղմացման միջոցառումները

Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնականում կանխատեսվում են շատ քիչ քանակով անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ հողային աշխատանքների ընթացքում:

6.2.1 Մթնոլորտային արտանետումներ

Հորատման, բեռնման, թափոնակույտման աշխատանքների ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ՝

$Q = K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_6 \times B \times G \times 10^6 / 3600$, գ/վ

որտեղ՝

K_1 –ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K_2 –ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէռոզոլային մասնիկների, 0.02

K_3 -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 2.5

K_4 –ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K_5 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K_6 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G –ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների ընդհանուր տևողությունը հաշվարկվում է մոտ 15 օր կամ 15 x 8 ժամ = 120 ժամ/շինարարություն:

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը գնահատվում է 72 խ.մ կամ 115.2 տոննա:

115.2 տոննա /120 ժամ = 0.96 տ/ժ

Այսպիսով՝

$Q=(0.05 \times 0.02 \times 2.5 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 0.96 \times 10^6)/ 3600 = 0.016$ գ/վ կամ

Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի՝

0.16 գ/վ x 120 ժ/շ x 3600 վ /10^6 = 0.007 տ:

Վնասակար նյութերի արտանետումների հաշվարկը շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում (դիզելային վառելիքի հետ կապված արտանետումները)

Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից մշակված «Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման» մեթոդական հրահանգի[1] հիման վրա:

Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև Աղյուսակ 6.1.1-ում:

Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Աղյուսակ 6.2.1

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO_x	CH	ՑՕՄ	CO	N_2O	CO_2	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցները, կախված ավտոմոբիլային պարկի միջին տարիքից և տեխնիկական վիճակից, բերված են ստորև Աղյուսակ 5-ում:

Վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցները

Աղյուսակ 6.2.2

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Ազդեցության գործակիցը	
		պարկի միջին տարիքի	տեխնիկական վիճակի
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	1.33	1.8
	CH	1.2	2.0
	NO_x	1.0	1.0
	CO_2	1.0	1.0
	N_2O	1.0	1.0

[1] Մեթոդիկայում ընդունված է տրանսպորտային միջոցների դասակարգումը «Core Inventory of Emissions in Europe» (այսուհետ՝ CORINAIR)՝ «Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում» մեթոդոլոգիային համապատասխան

Ածխածնի օքսիդի (CO), ածխաջրածինների (CH), և ազոտի օքսիդների (NOx) գործակիցները վերցված են «Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներից» (Մոսկվա, Հիդրոմետհրատ - 1983), իսկ ածխածնի ենթօքսիդի (CO_2) և ազոտի երկօքսիդի (N_2O) գործակիցները ընդունվել են 1, քանի որ որևէ այլ մեծություններ դրանց համար չեն առաջարկվում:

Ընդամենը շինարարության ընթացքում շահագործվելու են 4 միավոր տեխնիկական միջոց (բուլդոզեր, էքսկավատոր, ինքնաթափ), որոնք օգտագործում են դիզելային վառելիք: Դիզ.վառելիքի միջին օրական ծախսը կկազմի՝ 210 լ, իսկ հաշվի առնելով աշխատանքային օրերի քանակը, ծախսը հավասար կլինի՝ 10 x 210 = 2100 լ/շին. ժամանակահատված կամ 2100 x 0.835 = 1754 կգ/շին. ժամանակահատված:

Աղյուսակ 6.2.3

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները	
			գ/վրկ	տ/շին. ժամանակ.
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	87.14	0.42	0.153
	CH	0.58	0.0028	0.001
	NO_x	42.3	0.206	0.074
	N_2O	0.122	0.0006	0.0002
	ՅՕՄ	8.16	0.04	0.0143
	ՊՄ	4.3	0.021	0.0075

Ծծմբային անհիդրիդ

Ծծմբային անհիդրիդի (SO_2) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO_2- ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$ESO_2 = 2\Sigma ksb$

Որտեղ՝

ks-ը վառելիքում ծծմբի պարունակությունն է՝ հավասար է 0.002 կգ/կգ, b-ն վառելիքի ծախսն է՝ հավասար է 1754 կգ,

$ESO_2 = 2\Sigma ksb$

SO_2 = 2 x 1754 x 0.002 = 7.0 կգ/շին.ժամանակահատված կամ 0.007 տ/շին. ժամանակահատված,

7 : 100 : 8 : 3600 x 103 = 0.02 գ/վ:

Հաշվարկների արդյունքները ամփոփված ըստ աշխատանքների տեսակների և առանձին նյութերի բերված են ստորև Աղյուսակներ 7-ում և 8-ում: Հաշվարկներում միավորված են ազոտի օքսիդները և ցնդող օրգանական միացությունները (ածխաջրածիններ):

Արտանետումների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա գնահատելու համար որոշվել են դրանց սպասվող գետնամերձ կոնցենտրացիաները օդում ցրումից հետո: Քանի որ ռելիեֆի տարբերությունները գերազանցում են 50 մ իրականացվել է գործակցի հաշվարկ համաձայն ՕՀԴ-86 մեթոդակարգի, որի արդյունքում գործակիցը ընդունվել է հավասար 2.2:

Հաշվի առնելով, որ տեխնիկական միջոցները հանդիսանում են արտանետումների շարժական աղբյուրներ, ցրման հաշվարկները իրականացվել են միայն փոշու համար:

Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը շինարարության ժամանակահատվածում *Աղյուսակ 6.2.4*

Շինարարական աշխատանքների փուլերը	Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը, տ/շին. ժամանակահատված (գ/վ)					
	Փոշի	Ածխածնի օքսիդ	Ազոտի օքսիդներ	ՑՕՄ	ՊՄ	SO_2
1.Փորման-բեռնման աշխատանքներ	0.005. (0.014)	-	-	-	-	-
2. Ճանապարհի հարթեցում	0.002 (0.02)	-	-	-	-	-
3. Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները	-	0.153 (0.42)	0.0742 (0.21)	0.0153 (0.043)	0.0075 (0.021)	0.007 (0.02)
ԸՆԴԱՄԵՆԸ	0.007 (0.016)	0.153 (0.42)	0.0742 (0.21)	0.0153 (0.043)	0.0075 (0.021)	0.007 (0.02)

Շինարարության ընթացքում արտանետումները կլինեն տեղայնացված և չեն դիսպերսվի տարածքի սահմաններից դուրս՝ հաշվի առնելով դրանց արագ գրավիմետրիկ նստելու հատկությունը: Հետևաբար, փոշու արտանետումները չեն գերազանցի ՀՀ թույլատրված նորմերը, իսկ մթնոլորտային ավազանում դրանց հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կկանխարգելվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական միջոցառումների ծրագրում ներկայացված միջոցառումների իրականացմամբ, մասնավորապես.

- շինարար կապալառուն պարբերաբար կիրականացնի շինարարական հրապարակի ջրցանման և փոշենստեցման գործողություններ շինարարական աշխատանքների ընթացքում,
- շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ, սահմանափակ 30կմ/ժ-ը չգերազանցող արագությամբ,
- փոշի առաջացնող սորուն նյութերը (ավազ, խիճ և այլն) շինարարական հրապարակում կպահվեն ժամանակավոր՝ պաստառներով ծածկված վիճակում
- կիրականացվեն անվադողերը մաքրելու (ավազակոպճային մակերևույթների իրականցում) և լվացման միջոցառումներ,
- կառուցվող շենքերը արտաքինից և ներքինից կծածկվեն համապատասխան բարձրության անթափանց պաստառներով,
- աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակը:

Մթնոլորտային օդի աղտոտվածության կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումների առավել մանրամասն ցանկը ներկայացված է *ԲԿՊ-ում*

6.3 Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում և կանոնավոր կերպով կհսկվի վերջիններիս տեխնիկական վիճակը, իսկ անսարքությունների հայտնաբերման դեպքում կիրակնացվեն համապատասխան միջոցառումներ:

Շինարարական աշխատանքների ընթացքում շինարար կապալառուն պարտավոր է հետևել ՀՀ-ում թրթռումների գործող նորմերին, քանի որ շինարարության ընթացքում հարակից կառույցների վրա հասցրված ցանկացած ֆիզիկական վնասը կվերացվի շինարար կապալառուի կողմից՝ սեփական միջոցների հաշվին:

Աշխատանքների ժամանակ թրթռումների ազդեցությունը կլինի չնչին: Աղմուկի ազդեցությունը պայմանավորված կլինի շինտեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործմամբ:

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Օգտագործվող շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները ընտրվելու են այն նախապայմանով, որ դրանց տեխնիկական ցուցանիշներում աղմուկի մակարդակը չգերազանցի 80 դԲա-ն: Այս ցուցանիշը թույլ կտա ապահովել աշխատանքային տեղամասերի սանիտարական

նորմերը, Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումների առավել մանրամասն ցանկը ներկայացված է *ԲԿՊ-ում*

6.4 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման, որոշ շինաշխատանքների կազմակերպման համար, ինչպես նաև աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Գրականության և մոմի վաճառակետի կառուցման աշխատանքների ընթացքում առաջացած փոշու մակարդակները և դրանց հնարավոր տարածման ռիսկերը կկառավարվեն իրականացնելով շինարարական մակերեսների կանոնոնավար ջրցանում:

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսի հաշվարկը բերվում է ստորև.

$V = S \times K \times T \times K_1$

որտեղ՝

S – ջրցանվող տարածքի մակերեսն է՝ 100 ք.մ

K – 1 մ^2 օրական ջրցանի նորմատիվն է՝ 0.0015 խ.մ,

T – ջրցանի օրերը (տաք և չորային եղանակին)՝

22 օր x (2ամիս x 2) ամիս = 22 օր x 5 ամիս =88 օր

K_1- ջրցանի օրական քանակը՝ 2

Այսպիսով՝ V =100 x 0.0015 x 88 = 13.20 խ.մ /շինարարություն ժամանակ

Շին աշխատանքների ամբողջ ընթացքում ջրցանի նպատակով ծախսվող ջրի քանակը կկազմի 13.20 խ.մ:

Ջրցանի հաշավարկները կատարված են ըստ նորմերի և հաշվարկված ծավալները չեն ենթադրում հոսքաջրերի առաջացում: Ջրցանի միջոցառումները հրապարակում կկատարվեն պատշաճ մակարդակով՝ կանոնավոր և հաշվարկված ջրցանի ցուցանիշների շրջանակում՝ բացառելով հոսքաջրերի առաջացումը:

Կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար անհրաժեշտ ջրի ծախսի հաշվարկը ներկայացվում է ստորև.

$W= (n \times N + n_1 \times N_1)\ T$

որտեղ՝

n - աշխատողների և ծառայողների թիվն է՝ 3 մարդ

N - ջրածախսի նորման՝ 0.016 խ.մ,

n_1 - բանվորների թիվն է՝ միջին 17 մարդ

N_1 - ջրածախսի նորման բանվորների համար՝ - 0.025 խ.մ /մարդ օր

T–աշխատանքային օրերի առավելագույն թիվը ամբողջ շինարարության ընթացքում՝ 22 օր x 5 ամիս = 110 օր :

Այսպիսով՝ W= (3 x 0.016 + 17 x 0.025) x 110 = 52խ.մ/ շինարարություն ժամանակ:

Շինարարական աշխատանքներում և բանվորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը կվերցրվի նախագծվող տարածքում առկա ջրագծից, որը սպասարկում է եկեղեցուն :

Ներկայացվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցություններ ջրային համակարգերի վրա չեն կանխատեսվում, քանի որ նախագծվող հողամասի մերձակայքում չկան ազդեցության ենթակա ջրային մարմիններ:

Այլ անուղղակի ազդեցություններ ջրային համակարգերի վրա ևս չեն կանխատեսվում, քանի որ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ՝ բացառելով շին-մեքենաների երթևեկության ընթացքում հնարավոր արտանետումները:

Շինարարական աշխատանքների ընթացքում հոսքաջրերի առաջացում ևս չի կանխատեսվում՝ հաշվի առնելով աշխատանքների բնույթը, բացի այդ աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր հոսքաջրերի արտահոսքերը և այլ արտանետումները շինարարական հրապարակից: Շին գործողությունների ընթացքում գնահատվում են կեղտաջրերի (բետոնաջուր՝ բետոնախառնիչների լվացումից) առաջացում, որոնց հեռացման համար հրապարակում կպահվի կեղտաջրերի հեռացման տարա (≥10 խ.մ), որտեղ կհեռացվեն կեղտաջրերը, ինչպես նաև տեղումների ընթացքում հնարավոր հոսքաջրերի առաջացման դեպքում վերջիններս ևս կհեռացվեն տարայում կամ կուղղորդվեն տեղամասին կից քաղաքային հեղեղատար: Տարայում հետերոգեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս հնարավոր կլինի շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը՝ օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական աշխատանքներում:

Շին. հրապարակը նախատեսվում է ապահովել բիոզուգարաններով, որոնց տեղադրումը, շահագործումն ու ապամոնտաժը կիրականացվի արտադրող կազմակերպության սերտիֆիկատների և նորմատիվների հիման վրա՝ բիոզուգարանների քանակը նախատեսել ելնելով օրական աշխատող բանվորների առավելագույն թվաքանակից:

Շին. հրապարակում նախատեսված գրասենյակային տարածքն ապահովված է լինելու լվացարանով, աթոռներով, սեղանով, պահարանով, որից կարող են օգտվել նաև բանվորները: Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կճշտվի շինարարության ընթացքում և ըստ անհրաժեշտության այլ լրացուցիչ պայմանների ապահովումը կարող է իրականացվել հետագայում:

Ջրահեռացում

Տարածքների ջրցանի և հողերի խոնավացման ջրօգտագործման արդյունքում արտահոսք չի առաջանում:

Խմելու և կենցաղային կեղտաջրեր

$W_{կենց.կոյուղի} = W_{կենցաղ.} \times (1 - Կ)$, որտեղ՝

Կ՝ կորուստները, ընդհանրացված 5 տոկոս /0.05/,

$W_{կենց.կոյուղի} = 52$ մ$^3 \times (1 - 0.05) = 49.4$ մ^3/շինժամ, միջին օրական՝ 0.095 մ^3:

6.5 Թափոնների առաջացում և կառավարում

Երևանի տարածքում աղբահանության նպատակով ամենուրեք տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 0.1 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր և 10 խմ շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/ ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում կգոյոնա շուրջ 64 խ.մ ավելորդ գրունտ և 10 խ.մ շինաղբ, որը առանց պահեստավորելու, անմիջապես կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից թույլատրված աղբավայր:

Գործունեության ընթացքում կենցաղային աղբի մնացորդները կհեռացվեն տարածքի հարևանությամբ առկա աղբամաններում:

Շինարարության ողջ ընթացքում առաջացող յուղերի բանեցված մնացորդային քանակները կհավաքվեն և կպահվեն հերմետիկ փակ և մետաղական տարաներում, իսկ հետագայում կհանձնվեն վերջիններիս վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպության: Հրապարակում քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մետաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի վրա հնարավոր աղտոտման ռիսկերը:

Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քսայուղման գործողությունները կիրականացվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի բացառվի հրապարակում նյութերի արտահոսքերով պայմանավորված հնարավոր ռիսկերը:

Թափոնների կառավարման միջոցառումների համալիր ցանկը բերված է ԲԿՊ-ի համապատասխան բաժնում):

6.6 Սոցիալական ազդեցությունները և մեղմացումը

Գործունեության ընթացքում հնարավոր սոցիալական աղդեցությունները /չնայած դրանք փշատ փոքրաքանակ և փոքրածավալ են/ մեղմացնելու նպատակով աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն սահմանափակ ժամերի՝ 14:00-ից 18:00: Կվերահսկվեն շինարարական մեքենաների տեխնիկական վիճակը, որպեսզի դրանք ապահովված լինեն աղմկակլանիչներով, ժամանակին կվերացվեն սարքավորումների անսարքությունները կամ անսարք վիճակում գտնվողները կփոխարինվեն նորերով:

Հնարավոր սոցիալական ազդեցությունները շին-հրապարակում կբացառվեն նաև աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումների իրականացմամբ, որոնք մանրամասն նկարագրված են ԲԿՊ-ում, մասնավորապես՝ կիրականցվի հրապարակի ցանկապատում, կողմնակի անձանց մուտքը արգելող նշանների տեղադրում, հրապարակում աշխատող բանվորական կազմին

կտրամադրվեն անվտանգության միջոցներ, կապահովեն խմելու ջրի և հանգստի կազմակերպան պայմանները:

Շինարարական աշխատանքները շրջակա տարածքների զգայուն կլանիչների վրա էական ազդեցություն չեն ունենա, քանի որ աշխատանքները փոքրածավալ են, իակ շինարարական տեխնիկական միջոցների թվաքանակը շատ քիչ է: Սահմանված աշխատաժամերի պահպանումը թույլ կտա հնարավորինս խուսափելու հարևանությամբ առկա հանրային օբյեկտներում հանրության դժգոհություններից և բողոքներից:

Միևնույն ժամանակ մոմի վախառակետի կառուցումը էաթետիկական տեսանկյունից կունենա դրական սոցիալական ազդեցություն, քանի որ գործունեության իրականացմամբ կկանոնակարգվի մոմի վաճառքը:

6.7 Երթևեկության վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումները

Գործունեության ընթացքում կանխատեսվում են շինարարական մեքենա-սարքավորումների շարժով պայմանավորված ոչ էական դիտարկվող երթևեկության ծանրաբեռնվածություններ: Հաշվի առնելով, որ աշխատանքներն իրականացվելու են Երևան քաղաքի կենտրոնում, հնարավոր ազդեցությունները կմեղմացվեն հետևյալ միջոցառումներով: Շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժը կազմակերպել ժամանակացույցով, սահմանափակ արագությամբ (≤30 կմ/ժ):

6.8 Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները

Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- հրդեհի առաջացում
- հեղուկ նյութերի արտահոսք
- աշխատողների վնասվածքներ
- շահագործվող տեխնիկայի հետ վթարներ
- անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ:

Հնարավոր արտակարգ իրավիճակներից և վերոնշյալ ռիսկերից խուսափելու նպատակով շինարարական տեղամասում պարբերաբար կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները՝ այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:
- Շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվելու են հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն:
- Բանվորական և ղեկավար կազմը ապահովվելու է սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով:

- Հեղուկ նյութերը և քսայուղերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քսայուղերի հետ առնչվող բոլոր գործողությունները կիրականացվեն հատուկ մասնագիտացված կենտրոններում:
- Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, իսկ անհրաժեշտության դեպքում կտեղափոխվի բժշկական հաստատությունը:
- Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան, որը շինարար կապալառուն պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել:
- Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:
- Խտացված գազով բալոնը տեղափոխել միայն հատուկ պատգարակի միջոցով: Չի կարելի բալոնին մոտենալ յուղոտված հագուստով, արգելվում է գազոգեներատորի մոտակայքում ծխելը:
- Եռակցման աշխատանքներ իրականացնելու ժամանակ հետևել, որ էլեկտրա և գազաեռակցված սարքերը գտնվեն ճանապարհներից և անցումներից մի կողմ և էլեկտրաեռացման սարքը և եռակցվող նյութը լինեն հողանցված:

Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովվման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկերը, իսկ առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

6.9 Աշխատանքի անվտանգության և հակահրդեհային միջոցառումներ

Գործունեության իրականացման ընթացքում կարևորվում է հանրության անվտանգության և առողջության, ինչպես նաև շինարարական կազմակերպության աշխատողների անվտանգության և առողջության ապահովման հարցերին շինհրապարակում, որի համար նախատեսված են մի շարք միջոցառումներ հնարավոր ազդեցությունները և անհարմարությունները բացառելու կամ մեղմացնելու նպատակով:

Շինհրապարակում առողջության և աշխատանքային անվտանգությանն ուղղված կանոնները/միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի, որոնք համալիր ներկայացված են «Առողջության և աշխատանքի անվտանգության պլան», ինչպես նաև «Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան» ենթաբաժիններում (տես ԲԿՊ):

Շինարարական աշխատանքների ընթացքում խստորեն կպահպանվեն անվտանգության և հակահրդեհային միջոցառումները, մասնավորապես.

- Նախքան աշխատանքի սկսելը կկատարվի շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում և կտեղադրվեն մուտքը արգելող ցուցափեղկեր/նշաններ:
- Հակահրդեհային անվտանգությունը շինհրապարակում, աշխատատեղում և աշխատանքի տեղամասերում անհրաժեշտ է ապահովել համապատասխան «Հակահրդեհային անվտանգության կանոններ» պահանջներին համապատասխան,

ապահովել կրակմարիչի առկայությունը և հրդեհային անվտանգության վերաբերյալ պաստառներև այլն:

– Մինչև աշխատանքների սկսելը աշխատողներին պետք է հրահանգավորել անվտանգության տեխնիկայի մասին: Բանվորների աշխատանքների պաշտպանությունը պետք է ապահովվի վարչակազմի կողմից, նրանց անհատական պաշտպանական միջոցներ տրամադրմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ, սաղավարտ և այլն):

– Տանիքի և բարձրության վրա աշխատանքերի իրականացման ժամանակ, աշխատանքներն անհրաժեշտ է կատարել անվտանգության գոտիների օգտագործմամբ, որոնք պետք է ամրացվեն կոնստրուկտիվ ճշտված և հուսալի էլեմենտից:

– Եռակցման աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է հետևել, որպեսզի էլեկտրա և գազաեռակցված սարքերը գտնվեն ճանապարհներից և անցումներից մի կողմ և էլեկտրաեռացման սարքը և եռակցվող նյութը լինեն հողանցված:

– Խտացված գազով բալոնները պետք է տեղափոխել միայն հատուկ պատգարակի միջոցով: Բալոնին չի թույլատրվում մոտենալ յուղոտված հագուստով, արգելվում է նաև բալոնների մոտակայքում ծխելը:

– Արգելվում է տանիքում աշխատանքներն իրականացնելը, մշուշի, ամպրոպի և քամու 6 բալ արագությամբ գերազանցման դեպքում:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

7.1. Մթնոլորտային օդ

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է արտահայտած դրամական համարժեքով: Տնտեսական վնասի հաշվարկը կատարվում է շրջակա միջավայրին հասցվող վնասը դրամային ցուցանիշներով գնահատելու համար և չի առաջացնում որևէ ֆինանսական պարտավորություն:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն գործող մեթոդակարգի [1]: Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է հետևյալ բանաձևով՝

Ա-ն = Շգ x Φg x Վi x Քi

Որտեղ՝

Ա-ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամերով,

Շգ-ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված մեթոդակարգի աղյուսակի 9-ի արտադրական գոտու համար, որի շարքին դասվում է նախատեսվող տարածքը, ընդունվում է 4:

Փg-ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն մեթոդակարգի համաձայն Փg = 1000 դրամ:
Վi-ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, ածխածնի օքսիդի համար ընդունվում է 1, ազոտի երկօքսիդի համար՝ 12.5, անօրգանական փոշու համար՝ 10, ածխաջրածինների համար՝ 3.16, պինդ մասնիկների համար՝ 200, ծծմբային անհիդրիդի համար՝ 16.5 [15]:
Քi-ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, որը որոշվում է հետևյալ բանաձևով.
Քi = գ (3 ՏԱi -2 ՍԹԱi), ՏԱi > ՍԹԱi
Որտեղ՝
ՍԹԱi-ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով: Հաշվի առնելով, որ վնասակար նյութերի արտանետումների մթնոլորտում ցրման հաշվարկները ցույց տվեցին, որ սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են թույլարտելի նորմերի սահմաններում, փաստացի արտանետումները ընդունվում են որպես ՍԹԱ: Ելնելով այս հանգամանքից՝
Քi = գ ՏԱi:
ՏԱi-ն i-րդ նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով, անօրգանական փոշի՝ 0.026, 0.007 ածխածնի օքսիդ՝ 0.153, ազոտի օքսիդներ՝ 0.0742, ածխաջրածիններ՝ 0.0153, պինդ մասնիկներ՝ 0.00075, ծծմբային անհիդրիդ՝ 0.007:
գ = 1՝ անշարժ աղբյուրների համար,
գ = 3՝ շարժական աղբյուրների (ավտոտրանսպորտի համար):
Այն նյութերի համար, որոնց նորմատիվային ծավալային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Ա-ն = 4 ×1000 ×{1×10 × 0.007 + 3×1× 0.153 + 3×12.5× 0.0742 + 3× 3.16 × 0.0153 +
+3× 200× 0.0075 + 3×16.5× 0.007} = 33214
դրամ/շին.ժամանակահատված

Նշված գումարը որևէ ֆինանսական պարտավորություն չի առաջացնում:

7.2 Ջրային ռեսուրսներ

Աշխատանքների ժամանակ աղտոտված կեղտաջրերի արտահոսք դեպի ջրային ռեսուրսներ չի իրականացվվում, համապատասխանաբար ջրային ռեսուրսներին վնաս չի հասցվում և տնտեսական վնաս չի հաշվարկվում:

7.3 Ազդեցությունը հողածածկի, կենսաբազմազանության վրա

Գործունեության իրականացման արդյունքում հողային ծածկույթի վրա ազդեցությունների գնահատում չի դիտարկվում, քանի որ տարածքը ամբողջովին կառուցապատված է հողային ծածկույթը և բուսականությունը բացակայում են:

Այսպիսով, ընդամենը նախատեսվող կառուցապատման աշխատանքների արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասը դրամային արտահայտմամբ կկազմի 33214 **դրամ:**

8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ստորև ամփոփ բերվում են նախատեսվող գործունեությունից ակնկալվող բացասական ազդեցությունները մեղմացնող և/կամ բացառող *հիմնական* բնապահպանական, աշխատանքի և առողջության ապահովմանն ուղղված միջոցառումները.

- տեղեկատվության հրապարակում և հանրային լսումներ,
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում, լուսավորության ապահովում, տեղեկատվական ցուցանակների տեղադրում,
- շինարական աղբի և ավելորդ ոչ պիտանի գրունտի կանոնավոր հեռացում և թափոնակույտում Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,
- շինհրապարակում կտեղադրվեն կենցաղային թափոնների համար փակ աղբամաններ, իսկ կենցաղային աղբը կհեռացվի հասարակական աղբաման,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերի սահմանում,
- շինարարական մեքենաների տեղաշարժը կիրականացվի սահմանափակ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- շինհրապարակից դուրս գալիս կապահովվի մեքենաների անիվների լվացման միջոցառումներ,
- աղմուկ առաջացնող աշխատանքներն կիրականացվեն թույլատրելի մակարդակների սահմանում,

- շինարարական նյութերի ձեռք բերումը կիրականցվի լիցենզավորված մատակարարից,
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե/ մետաղական կամ ավազե հիմքերի վրա,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների ընթացակարգերը և կոնտակտային տվյալները պաստառների ձևով կփակցրվեն հրապարակում, այդ թվում հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ,
- կիրականացվեն աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումները, ներառյալ՝ բանվորական կազմը կապահովվի սեզոնային արտահագուստով և անվտանգության սաղավարտներով, անհատական պաշտպանիչ դիմակներով և այլն,
- մեքենաների վառելիքի լիցքավորումը, քսայուղերի փոխարինումը կկազմակերպվի հիմնականում շինհրապարակից դուրս և մասնագիտացված կենտրոններում,

Չափագրումների իրականացման համար Կառուցապատողը կհամագործակցի նշված աշխատանքներն իրականացնող մասնագիտացված լաբորատորիայի հետ:

8.1.Մոնիտորինգ

Շինհրապարակում և հարակից տարածքներում մոնիթորինգի իրականացումը հնարավորություն կտա հսկելու շինարարական աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի, կամ հարակից տարածքների վրա՝ վնասակար ազդեցությունների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Մոնիթորինգի իրականացման հիմնական նպատակն է ստեղծել տեղեկատվություն միջավայրի փոփոխությունների մասին:

Շինհրապարակի համար առաջարկվող մոնիթորինգի միջոցառումները հետևյալն են՝

1. Մթնոլորտային օդի որոակի մոնիթորինգ՝ ամիսը երկու անգամ,
2. Շրջակա տարածքների հողային ծածկույթի մոնիթորինգ՝ ամիսը մեկ անգամ,
3. Տեխնիկական միջոցների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
4. Աղմուկի և թրթռումների մակարդակի չափումներ:

Որպես սահմանային թույլատրելի խտությունները ընդունվելու են. ածխածնի օքսիդի համար՝ 5մգ/մ^3, ազոտի երկօքսիդի համար՝ 0.2մգ/մ^3, մրի համար՝ 0.15մգ/մ^3 :

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով, որը նախատեսվում է հողային աշխատանքների ժամանակ /որի տևողությունը 15 օր է/ տրամադրվելու է 150.0 հազ.դրամ:

Շինարարության ընթացքում նախատեսվում է իրականացնել նաև մթնոլորտային օդի որակի, աղմուկի, թրթռման, հողային ծածկույթի մշտադիտարկումներ:

Կառուցապատողի կողմից կանոնավոր մոնիտորինգ է իրականացվելու, որպեսզի վերահսկվի ԲԿՊ-ում- նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը: Մշակված մոնիտորինգի պլանը ներկայացվում է *Հավելված 2*-ում:

Միջոցառումների իրականացման ամենօրյա վերահսկողությունը կիրականացվի տեխնիկական վերահսկման խորհրդատուի կողմից: Տեխնիկական վերահսկողները հսկելու են նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը և ժամանակին տեղեկացնելու են Կառուցապատողին նկատված անհամապատասխանությունների մասին:

Չափագրումների իրականացման համար Կառուցապատողը կհամագործակցի նշված աշխատանքներն իրականացնող մասնագիտացված լաբորատորիայի հետ:

9. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Ներկայացվող գործունեության վերաբերյալ երրորդ հանրային քննարկումը նախատեսված է 2021թ-ի դեկտեմբերի 3-ին՝ ժամը 11:00-ին, Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի շենքում: Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2021 թվականի նոյեմբերի 20-ի համարում հանրային ծանուցման գործող ընթացակարգին համաձայն, այն է՝ քննարկումն անցկացնելու օրվանից առնվազն 7 աշխատանքային օր առաջ: Հանրային քննարկման մասին հայտարարությունը և ՇՄԱԳ հաշվետվությունը սահմանված ժամկետում տրամադրվել են նաև Երևանի քաղաքապետարանին: Սույն, 8-րդ գլուխը կլրամշակվի համապատասխանաբար՝ նրանում ներառելով նաև 3-րդ հանրային քննարկման նյութերը, նախքան այն ՀՀ ՇՄ նախարարություն ներկայացնելը:

10. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. Հունիսի 21:
- Կլիմայաբանութուն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. Սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- Http://xn--80aajzhcnfck0a.xn--p1ai/publicdocuments/1310049.pdf
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- Www.arlis.am
- Www.atdf.am
- ՀՀ կառավարության N 862-Ա որոշում: Անհատույց սեփականության իրավունքով գույք հանձնելու և քանդման (ապամոնտաժման) աշխատանքներ կազմակերպելու մասին: 25 օգոստոս 2016, URL: https://www.e-gov.am/gov-decrees/item/27593/:
- Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներ, Մոսկվա, Հիդրոմետիրատ – 1983:
- ՀԲ 2015: Բնապահպանական և սոցիալական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:
- СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
- СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
- СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.

11. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Բնապահպանական կառավարման պլան

Ծրագրի Գործողու-թյունները	Հնարավոր Ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող Միջոցառումները	Մեղմացնող միջոցառման պատասխա-նատուն	Մոնի թորինգի պատասխա-նատուն
Նախագծային փաստաթղթերի պատրաստում Շինարարական Հրապարակի Բոլոր գործողութ- Աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց անվտանգություն	Բացասական ազդեցություններ՝ շինարարության փուլում, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, ԲԿՊ-ի բնապահպանական Պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման:	Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև պայմանագրային փաստաթղթերում: - Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունների ձեռք բերում - Տարածքում առկա ինժեներական ենթակառուցվածքների անջատման, կամ տեղափոխման վերաբերյալ թույլտվության ձեռք բերում, սեփականատիրոջ հետ համաձայնեցում - Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ Պահանջվող աշխատանքային - Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ Աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: - Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ - Աշխատանքները	Շինարարության կապալառու Կապալառու	Տեխնիկական վերահսկող Երևանի քաղաքապե-տարան

		կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան բնակիչների և շրջակա տարածքների վրա: - Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) - Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:, - Փակցնել և կիրառել մեքենաների արագության սահմանափակումներ մեքենաների երթևեկությունից առաջացող փոշու նվազեցման համար, - Մշակել երթևեկության կառավարման պլան երթևեկության սահուն հոսքը և երթևեկության անվտագությունն ապահովելու նպատակով, - Բեռնատար փոխադրամիջոցների երթևեկությունն իրականացնել միայն ցերեկային ժամերին - Նվազեցնել մեքենայի արագությունը (պահպանել նախատեսված արագությունը) բնակեցված տարածքներում		
Հողային աշխատանքներ,	Շին տեխնիկայի շահագործո	- Օդի աղտոտման և փոշու կառավարում Օդի որակի չափագրումներ	Շինարարության կապալառո	Տեխնիկակա ն

